ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 195 –Ա

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ>> ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպությունը իրականացնում է <<Տաք ճմեռ>>ծրագիրը, որը նպաստում է տարեցների առողջության պահպանմանը՝ ճմռան ամիսներին հոգալով նրանց բնակարանների ջեռուցման խնդիրները:

Ելնելով հարցի լուծման անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի նոյեմբերի 28-ին 12314 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպությանը հատկացնել 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ նվիրատվություն՝ ճմռան ընթացքում թվով 400 կարիքավոր ծերերի (յուրաքանչյուրին 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով համաֆինանսավորման միջոցով) ջեռուցման կարիքները հոգալու նպատակով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ. Կարապետյան _____		

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.